ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝«Երևանի «Արգենտինյան Հանրապետություն» h. 76 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «ինֆորմատիկա» (7 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
2) Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) Անձը հաստատող փաստաթուղթ,
4) ինքնակենսագրություն (Ձև 5),
5) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ աշխատելու իրավունքը,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,
8) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9)Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 7-ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի «Արգենտինյան Հանրապետություն» h.76 հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ք. Երևան Բաղրամյան 52:

Տեղեկությունների համար զանգահարել (010)26-57-77 հեռախոսահամարով: